ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/15

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.01.2019թ. թիվ 26-3/572-19 գրությամբ «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կառլենի Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 14.01.2019թ. թիվ 5 գրության հիման վրա, 18.01.2019թ. թիվ 26-3/572-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 24.01.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>«Կառլենի Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը.</u>**

«Կառլենի Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.01.2019թ. թիվ 5 գրությամբ հայտնել է, որ «Կառլենի Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-18/17, ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-18/18, ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/19 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի շրջանակներում ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությունների արդյունքում «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է իրականությանը չհամապատասխանող, մասնավորապես՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 5 667 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 24.01.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/15 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2019/15 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Կառլենի Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից «Կառլենի Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարավել է «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-18/17» ծածկագրով, բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով՝ «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-18/18» ծածկագրով և քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով՝ «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգեր (այսուհետ՝ Ընթացկարգեր), որոնց մասնակցելու նպատակով համապատասխանաբար՝ ***03.12.2018թ., 05.12.2018թ. և 03.12.2018թ.*** հայտեր է ներկայացրել «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն:

2. «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-18/17», «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-18/18» և «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/19» ծածկագրերով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համապատասխան որոշումներով Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա համապատասխանաբար 17.12.2018թ., 21.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 5 667 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-18/17», «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-18/18» և «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/19» ծածկագրերով մերժել է Ընկերության հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.01.2019թ. թիվ 26-3/572-19 գրությունը, «Կառլենի Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 14.01.2019թ. թիվ 5 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու*** և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին ***հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող*** կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Այսպիսով, «Կառլենի Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից «Կառլենի Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և

պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարավել է «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-18/17» ծածկագրով, բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով՝ «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-18/18» ծածկագրով և քիմիկան նյութերի ձեռքբերման նպատակով՝ «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգեր, որոնց մասնակցելու նպատակով համապատասխանաբար՝ ***03.12.2018թ., 05.12.2018թ.*** հայտեր է ներկայացրել «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգերի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

«ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-18/17», «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-18/18» և «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/19» ծածկագրերով Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի համապատասխան որոշումներով Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.12.2018թ. և 21.12.2018թ. տրամադրված եզրակացությունների համաձայն՝ ***«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 5 667 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-18/17», «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-18/18» և «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/19» ծածկագրերով մերժել է Ընկերության հայտը:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 17.12.2018թ. և 21.12.2018թ. տրամադրված եզրակացությունների համաձայն՝ ***«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 5 667 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է համապատասխան չափաբաժիններով Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկների մեկ տոկոսի շեմը: Մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և***

հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգերի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ*** հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ***ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը***, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը ***գերազանցող ժամկետանց պարտավորություններ***:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Միաժամանակ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող*** կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը, գտնում եմ, որ «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-18/17», «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՊԱՐ-18/18» և «ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ՔԻՄ-18/19» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.01.2019թ. թիվ 26-3/572-18 գրությամբ «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02677537) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ